ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

«16» հունվարի 2018 թվականի № 02-Հ

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. մայիսի 15-ի №654-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի №1721-Ն որոշմամբ սահմանված՝ Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգի և պայմանների (այսուհետ՝ Կարգ) 3-րդ և 4-րդ կետերի դրույթները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպությունների ընտրության նպատակով ստեղծել հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել ղեկավարվելով Կարգի դրույթներին համապատասխան:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. հոկտեմբերի «16»-ի
02-Ն հրամանի

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպությունների ընտրության

| | |
|---|---|
| Հայկ Հմայակի Հարությունյան | Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ) |
| Հովհաննես Բուրմանյան | Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար) |
| Անահիտ Անտոնյան | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ապահովման վարչության պետ (համաձայնությամբ) |
| Սեդա Շահինյան | Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ (համաձայնությամբ) |
| Լուսինե Ոսկանյան | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ) |
| Հայկ Հարությունյան | Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական |

խորհրդատվության բաժնի պետ
(համաձայնությամբ)

Նարինե Սարգսյան

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ